Դարույր Սևակ

Հավատարմությունը սրտի արատ չէ

1

Դարե՛ր շարունակ,
Դարե՛ր շարունակ
Բոլոր գույներից կապույտն առավել
Հուզել է մարդուն,
Միտքը խռովել:
Օվկիանին տիրած,
Իշխելով ծովին՝
Նա աչքը տընկեց
Երկրնքին ծավի:
Իզուր կարծելով,
Որ այլ ճար չունի
Վերին ծովերում լողալու համար՝
Մարդը միտք արեց կապկել թռչունին:
Սակայն...
Կապկելուց այդ ե՞րբ է ախար մեծ բան դուրս եկել,
Որ դուրս գար հիմա:
Չէ՞ որ ծովերում լողալու համար
Ճայ լինելն անգամ կատակ է հիմար -
Պետք է ձո՛ւկ լինել:

Եվ Մարդը հիշեց,
Որ ինքն առաջին իր նավակները
Իրոք որ ձկան տեսքով էր շինել:
Եվ հենց ա՛յն պահին,
Երբ թռչուններին կապկելուց պրծավ,
Այդ պահին էր հենց,
Որ երկրո՛րդ անգամ
Մարդը աշխարհում կապկից մարդ դարձավ:

2

Ստեղծվեց ահա, վերջիվերջո, նա՝
Այն երկնաձուկը,
Որով պիտի որ շուտով վերջանա
Մարդու անձուկը:
Երկնային ծովի նավա՞կն առաջին...
Նավա՛կ,
Որ արդեն կարող է լողալ
Առանց հովերի.
Նավա՛կ,
Որ արդեն կարող է տիրել
Վերին ծովերին.
Նավա՛կ,
Որով Մարդն ուր որ է ահա
Պիտի կատարի
Տիեզերական տեղափոխություն.
Տեղափոխությո՛ւն,
Որ համեստություն անելուց եթե մի պահ դադարի՝
Կարող է իսկույն ինքն իրեն կոչել... հեղափոխությո՞ւն:

3

Հեղափոխության շունչն է զգացվում և Տիեզերքում,
Ու շուռ է եկել ամեն ինչ հիմա:
Իսկապե՛ս.
Չէ՞ որ դարե՛ր շարունակ
Մեր Հողագնդի կտուրից վերև
Չի անցել ոչի՛նչ -
Ո՛չ քամուց քըշված աշնան մի տերև,
Ո՛չ գընդակ,
Ո՛չ ճիչ:
Եվ մինչև անգամ ամեն մի թըռչուն,
Որ վերևում է շընչում
Ու շրջում,
Թըռչունն ինչ է որ -
Փա՛ռք ստեղծողին -
Թռչունն էլ վերջում
Հանգըստանում է կամ... սատկում հողին:
Վայր ընկնող աստղեր՝
Երկնային ծովից մի պահ դուրս թռած
Օձաձկան պես -
Նո՛ւյնպես վերևից:
Գիսավոր աստղեր՝
Ղումաշից կարած
Զանգաձև շորի փեշերը փռած
Բոց աղջըկա պես -
Նո՛ւյնպես վերևից:
Հրեշտակները՝
Դարձյա՛լ վերևից:
Նաև՝

դևե՛րը:
Եվ ինքը՝
աստվա՛ծ...

4

Բայց... շուռ է եկել ամեն ինչ հիմա.
Վերևից սուրող աստղերի տեղակ
Այժըմ ներքևից
Եռաստիճանի աստղեր գիսավոր
Վերև են սուրում
Եվ հանդիսավոր
Կոչում են իրենց
Ո՛չ վար ընկնող աստղ,
Ո՛չ էլ գիսավոր -
Կոչվում են հրթի՛ռ:
Լսո՞ւմ ես,
Ո՛վ Մարդ՝
Սևանից - Բայկալ,
Ջունգլիից - տայգա:
Լսո՞ւմ ես,
Ով Մարդ.
Շունը՝
Մի Լայկա՛,
Որ իբրև մակդիր
Դարեր շարունակ միշտ քարշ է տվել
Մի բառ՝
«կապովի»,
Երեկ չէ՞ր,
Դարձավ... տիեզերական խիզախ կապավոր:

Շունը՝
Մի Լայկա՛,
Որ ամբողջ կյանքում
Հանգով - չափավոր
Հաչել է միայն Լուսնյակի՛ վրա,
Երեկ չէ՞ր արդյոք,
Որ իր վերևից
Կաղկանձեց նաև Արևի՛ վրա,
Հողմաղացային անիվի չափ մեծ
Մի խո՛րթ Արևի...
Նա չէ՞ր, որ երեկ
Հենց այն էր անում,
Ինչ և ոչ մեկիս
Բախտ չէր վիճակվել գոնե մե՛կ անգամ.
Գոռոզ երկրնքին տնազ էր անում-
Լեզու էր հանում...

5

Հեղափոխության մրրիկն է ճայթել
Նաև վերևում:
Եվ միանգամից - չուզելով - հանկարծ
Հեղափոխվում է հայա՛ցքդ անգամ.
Քիչ առաջ հանգիստ,
Իսկ հիմա գժված
քամուց
Պոչնիվար տանիքից քշված
Գյուղական ծաղկուն ավելը ծանոթ
Ինձ ցերեկային գիսաստղ է թվում...
Նույնիսկ հավերն են հիմա ինձ թվում -

Անվարժ-անճոռնի քայլող հավերը
Կարծես թե այսօր
(Առաջի՛ն անգամ)
Իրենց տոտերով դաջում են... աստղեր՝
Հողի երեսին երկի՛նք նկարում...
Ծիրանի ծառից խեժն է վար ծորում -
Ասես վայր ընկնող մի աստղ է ծյուրում...
Ճերմակ մալաչա տանձերն են կաթում -
Կարծես թե օդում
Գլխիվայր շրջված պարաշյուտներ են լիլիպուտային...
Մի ողջ Ծիրկաթին ողկույզ-ճութային,
Եվ մի աննշան, մի խելառ ճպուռ
Խարջու գնդաձև շրջանն է ահա
Լարված բզզոցով անվերջ չափչփում,
Պտույտներ տալիս նույն ուղեծիրով
Ու հետո՝
Թափով ընկնելով ճութին,
Ջոհվում է նրա ձյութի պես կպչուն
Ու ճահճի նման ներս քաշող հյութին,
Ջոհվում է -
Ինչպես մթնոլորտային խիտ շերտերի մեջ
Արբանյակներն են խրվելով կորչում...
Հեղափոխվել է հայա՛ցքը դ անգամ: